


մէ միայն Նաղաշը: Եթէ միջնագարեան հայ երգիչները և տաղաչափները խմբի պարագը-
լուին համարենք Ներսէս Շնորհալուն թի-
զարում և վերջին ներկայացուցիչ զնենք
Պետրոս վ: Ղափանցուն¹ թվ. դարում պի
տի խոստովանենք, որ հայ երգիչների պա-
րի այս երկու ծայրերի ներկայացուցիչներն
արգարև բանաստեղծներ են, մինչ միջին
անդամներից մեծ մասը տաղաչափ—բարո-
յախօս քարոզիչներ են:

Ն. Զարամեան:



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԹԱԿԱՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՉԵՒԱՆԻ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԸԸ,

(Շարունակութիւն).

7.

Այժմ հայ կաթողիկոսը քաղաքային խորհրդա-
րանի վերոյիշեալ որոշումներից անշուշտ իրաւունք
ունէր գոհ չը լինելու, քանի որ քաղաքը 1871
թուականի համախօսականով իւր վերայ առած պայ-
մանները չէր կատարում և, առանց իւր կողմից որև
է զոհողութիւն անելու, այնպիսի մեծ իրաւունքներ
էր պահանջում և, որ գլխաւորն է, կարգադրութիւն
էր անում իւրեան չպատկանած եկեղեցական—վի-
ճակային եկամուտների և անշարժ կալուածքի վե-
րաբերութեամբ: Սակայն Ա. Ե. Ս. Վաթ. ամենևին
գեթականութիւն ցոյց չտուեց, այլ ընդհակառակը
ստանալով քաղաքագլխի պաշտօնական յայտարար-
ութիւնը Յանձնաժողովի ղեկուցագրի պատճենի
հետ միասին, ընդունեց նոցա առաջարկութիւ-
նը և օրհնեց նոցա ձեռնարկութիւնը, որով մէկ
անգամ ևս ապացոյց տուեց Ս. Էջմիածնի գէպի
իւր հօգևոր զաւակները ունեցած հայրական յա-
րաբերութեանը. նա միայն առ ժամանակ աւելորդ
համարեց պատուամեծար հոգաբարձուի պաշտօն
հաստատելը և աւելացրեց, որ քաղաքը աշխատէ

նիւթական միջոցները ներելուն պէս չորս դասարանը
լիակատար ժառանգաւորաց դպրանոցի վերածել.
«Յոսատի և անշուշտ եմ: զի է յարող ինչոյնց ընդունիլն
բարձրան միջոցացն, սորոցն զն-խորտը կերպարանս հոս-
յայն ինչ-կան նշան-լուսնեան և գոգեթանաց և նպարտաց
մերոց»: Առաջին հոգաբարձու ընտրուեցան խորհր-
դարանի իրաւասուններից՝ Բ. Խլիվեան, Խ. Ալալեան,
Խ. Ստեփաննան, Տեր-Խաչատրը Զարեմեան և Գ. Տիգ-
րանեան, որոնց կաթողիկոսը հաստատելով, երկու
գլխաւոր պարտականութիւն գրեց նոցա վերայ.
«Նախ՝ յամենայն հոգեհոգ լինել է իւր-իւրոս և է բնաց-
ձեր ընդ արտաբերելու և վերջից երկոյն-իւրոս եկեղեցեաց
որեւ-իւր՝ որ արտիքն լինել արտաբերել անձեռնի
որտի հոգեթոյն-լուսնեան և երբեք որ ինչ-էլ արտաբեր-
ելով և բարձրանայ վարտ անիւրի կորուսելու զորոս
հոգեթոյն-լուսնեան Զերոյ»: Առաջին հոգաբարձու-
թիւնը շատ գործ ունէր անելու. նորա վերայ պար-
տականութիւն էր դրած բանալ և կառավարել մի
դպրոց, որ պէտք է բաւականութիւն տար ոչ թէ
միայն Նախիջևանի հասարակութեան պահանջնե-
րին, այլ և բոլոր թեմի, Ճիշդ է, դպրոցը սկզբում
պէտք է կազմուած լինէր միայն չորս դասարանից,
բայց ապագայում նա պէտք է լիակատար ժա-
ռանգաւորաց թեմական դպրանոցի վերածուէր, ու-
րեմն կարևոր էր, որ այդ դպրոցի հիմքը հաստատուն
չլինուէր, որ նա կարողանար դիմանալ ամեն տեսակ
պատահարի. նա սկզբնապատճառ պէտք է լինէր
մի հաստատութեան, որ փոքրից սկսելով, կամաց-
կամաց պիտի մեծանար և բոլոր թեմի թէ աղա-
յին և թէ կրօնական տեսակետից յոյսն ու ապա-
ւենը լինէր, Գործը շատ պատասխանատու էր, իւր
նպատակներին հասնելու համար հոգաբարձութիւնը
շատ գեթականութիւնների պէտք է յաղթէր, շատ
նեղութիւն պէտք է քաշէր, շատ արգելքների
պէտք է պատահէր, Գեթականութիւններից առաջի-
նը և գլխաւորը դպրոցի նիւթական միջոցների կա-
նոնաւորելու և նոր նիւթական միջոցներ գտնելու
խնդիրն էր, որովհետև եղած միջոցները այնքան ա-
նորոշ, այնքան անհաստատ էին, որ անկարելի էր
առանց դրանց կանոնաւորելու, ձեռնարկել դպրոցի
բացման, Բացուելիք դպրանոցի չորս դասարանի
համար քաղաքային խորհրդարանից մշակուած և
կաթողիկոսից հաստատուած շարքով հարկաւոր էր
ութ հազար ուրբի, որ պիտի գոյանար վանազան
եկեղեցական հասոյթներից հետեւեալ կաթողիկո-
սահաստատ ցուցակով

1. Ղափանցու երգերի հրատարակութիւնը կարողա-
ցանք գտնել համեմատութիւնը հաստատեց մեր ննթադար-
ձը, որ Արարատի մէջ մեր նկարագրած ձեռագիրը ար-
տագրութիւն է այս հրատարակութիւնից:

¹ Հոգաբարձութիւնն ընտրուում էր երկամսյա ժամա-
նակով: Հոգաբարձական ժողովներին առհասարակ նախա-
գահում էր Զաղաքագլուխը (ինչոն):

մեջեւ էր գնել ուսուցչական ինստիտուտի համար տալով 75 հազար սուրբի բայց համաձայնութիւն չէր ստացել։ Ս. Էջմիածնում այդ տան վերաբերութեամբ ուրիշ կարծիք ունէին, կարծում էին, որ վերջ ի վերջոյ հնարաւոր կլինի տունը շատ թանկ գնով ծախել և նորա եկամտով բոլորովին ապահովել դպրանոցը, սակայն սխալուեցան, որովհետեւ երբ գինը բարձրացրին առաջ մինչև 75 հազարի, յետոյ 90-ի, իսկ յետոյ 110 ի տէրութիւնը հրաժարուեցաւ իւր մտադրութիւնից և տան ծախելու խնդիրը մնաց, որովհետեւ մի ուրիշ գընող, բացի տէրութիւնից, չգտնուեցաւ, Թէև վերջ ի վերջոյ թէ եկեղեցիներին և թէ պատկերի ու ձնագեան վկայականների և մոմսվաճառութեան խնդիրները կաթուղիկոսի իշխանական հրամանով կարգադրուեցան յօգուտ դպրանոցի, բայց հոգաբարձութիւնը գործի շատ ձգձգուելուց, երկար, շատ անգամ ապարդիւն գրագրութիւնից վճատելու ջան տաղնապի մէջ ընկաւ, Այդ տագնապի և վհատութեան բնաւորութիւնը երևում է այն ժամանակուայ հոգաբարձութեան բոլոր արձանագրութիւններին մէջ, նոյն բնաւորութիւնը կրում են հոգաբարձութեան և այն բոլոր խնդրագրերը, որոնցով նա հրաւիրում էր կաթուղիկոսի ուշադրութիւնը իւր նեղ գրութեան վերայ, «Այլ, եթէ յիրաւի օտարացին ի նմանէ (ի դպրանոցէ) որևիցէ աղբիք արդեանց՝ նախասահմանեալք յանայթաք կառավարութիւն նորին ի նորին Տէրութենէ (ի կաթուղիկոսէ)», կարգում ենք արձանագրութիւններից մէկի մէջ, «Գժուարին յոյժ լինցի բանալ զմիւս դասարանս դպրոցին և անհնարին ունել երբևիցէ զլիակատար դպրանոց վիճակային ըստ փափագանաց սըրտի նորին Օծութեան և համայն ժողովրդականաց կոչմանս, վասնորոյ և հոգաբարձուք ոմանք ապարդիւն իմն համարելով այնուհետև զստանձնեալ պաշտօն իւրեանց, ստիպեալ գտցին ցաւ ի սիրտ հրաժարիլ...» Կաթուղիկոսը տեսնում և հասկանում էր հոգաբարձութեան այդ նեղ գրութիւնը. նա ինքն էլ տագնապում էր և աշխատում էր իւրովսանն օգնել նորան, բայց գժբաղդարար այդ ժամանակ իւր ձեռքի տակ մի այլ եկամտի ազատ աղբիւր չունէր, որ կարողանար առանց մի այլ հաստատութեան վնասելու, յատկացնել դպրանոցին, Անհարանում երկու ծանապարհով էին մտածում այդ գործին դարման տանել, կամ յատկացնել տալ յօգուտ դպրանոցի Մասէի Բարաջանի կտակած «Տընդկական» կոչուած գումարի արդիւնքը, որ գտնուում

էր Նախիջևանի քաղաքային խորհրդարանի տնօրէնութեան ներքոյ, կամ Խրիմի «Խանդամեանց» կոչուած հողի արդիւնքը, որ գտնաստանական վէճի մէջ լինելով, տակաւին հոգևոր իշխանութեան չէր յանձնուած, Հոգևոր իշխանութեան վերոյիշեալ երկու ծանապարհով դպրանոցը ապահովելու հոգացողութեան մասին մենք տեղեկութիւն ունինք գըլխաւորապէս այն մասնաւոր նամակներից, որ այդ ժամանակ հասնում էին հոգաբարձուներին, Անհարանից, «Կարելի չէ, գրուած է Անհարամ վարդապետ Մանկունու ձեռքով գրած նամակներից մէկում, Հնդկաստանէն ստացուած Մասէի Բարաջանի կտակին գումարը յանուն դպրանոցին շրջել, որ և բաւական եկամուտ կլինի...», Խանդամեան հողն ևս՝ որ շուտով վերջնական վճիռ կտանայ ի Սիմֆերապոլ յօգուտ և ի սեփականութիւն եկեղեցւոյ, պիտի յանձնուի դպրանոցիդ՝ երբ վճիռն հասնի»։ Սակայն Անհարանի հոգացողութիւնը այդ երկու աղբիւրների վերաբերութեամբ ևս ի դերև ելաւ, որովհետև հնդկական գումարի արդիւնքը կտակի զօրութեամբ քաղաքային խորհրդարանը իրաւունք չունէր լիովին յատկացնել դպրոցին, իսկ Խանդամեանց հողի վէճը վճուուեցաւ ոչ յօգուտ հոգևոր իշխանութեան, Սորանից յետոյ հոգևոր իշխանութիւնը մի վերջին փորձ ևս արեց ապահովելու դպրանոցը, Մասնաւոր կերպով յանձնուեցաւ զըզրոցի նորահաստատ տեսուչ Գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցին բանակցութիւն սկսել Գէորգ Խոջայեանի հետ և աշխատել ամէն տեսակ շահել նորա սիրտը, որպէս զի յետոյ հնարաւոր լինի կաթուղիկոսական կոնդակով վերջնական կերպով համոզել նորան իւր առաջուայ խոստացածը տալ զըզրանոցին, Բայց մեզ անյայտ պատճառով կաթուղիկոսի այդ վերջին փորձը ևս չյաջողուեցաւ, պէտք է կարծել, որ, կամ աշխատողները թոյլ գտնուեցան և կամ որ աւելի հաւանական է, Խոջայեանը չհամոզուեցաւ։

(Վ. Իրքը միւս համարում)

Ե. Շ.



1 Նամակը գրուած է Տէր-Խաչատուր ՀարիՖեանին 1874 Վնտը. 20-ին։

2 Հնդկական գումարի արդիւնքի միայն չորրորդ մասը պէտք է գործ դրուի դպրոցական գործի համար, իսկ միւս մասերով կտակի զօրութեամբ պէտք է պահուին ուրիշ բարեգործական հաստատութիւններ։ Զաղաքային խորհրդարանը ուսումնարանի համար նշանակուած չորրորդ մասը արդէն յատկացրել էր քաղաքային դպրոցին։